ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռ. Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ—Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը զարգացած սոցիալիզմի պայմաններում, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 165 էջ։*

Մենագրությունը նվիրված է 1960—70-ական թվականներին Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը որոշող օրինաչափությունների բացահայտմանը, նրա զարգացման միտումներին։ Գրքի առաջին գլխում հեղինակն անդրադարձել է գիտատեխնիկական հեղափոխությանը և Հայաստանի բանվոր դասակարգի ընդհանուր կուլտուրական մակարդակի աճի հարցերին, իսկ երկրորդ գլուխն ամբողջովին նվիրված է ՀՍՍՀ բանվոր դասակարգի տեխնիկական մակարդակի աճին։

Աշխատության մեջ նշվում է, որ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ինչպես ամբողջությամբ ՍՍՀՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանում տեղի են ունեցել սոցիալ-տընտեսական կարևորագույն վերափոխություններ, որոնք հանգեցրին բանվոր դասակարգի կազմի քանակական և որակական լուրջ փոփոխությունների։ Այս պրոցեսները տարերային բնույթ չեն կրում, այլ ՍՄԿԿ-ի գիտականորեն հիմնավորված սոցիալական քաղաքականության արդյունքն են։

Արտադրության մեջ, ինչպես նաև հասարակական և մշակութային կյանքի տարբեր ոլորտներում բանվոր դասակարգի ստեղծագործական գործունեության ուժեղացումը նրա ընդհանուր կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման արդյունք է, որը տանում է դեպի նոր, բազմակողմանիորեն զարգացած անհատի ձևավորման պրոցեսի խորացում։

Գրքի պատասխանատու խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր Կ. Ս. Խուդավերդյանը։ Գիրքը լույս է տեսել ռուսերեն։

Ա. Ե. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 216 էջ։*

Աշխատությունը հայ մեծանուն լեզվաբան Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքների առաջին մենագրական հանգամանալից ուսումնասիրությունն է։

Ա. Այտընյանը հայ մշակույթի պատմության այն գործիչներից է, որոնց վաստակը չի սահմանափակվում մեկ բնագավառով։ Նա հանդես է եկել գիտության, արվեստի, հասարակական գործունեության տարբեր ասպարեզներում՝ հասնելով ակնհայտ հաջողություններ։ Սակայն նրա հանրագիտարանային ընդգրկում ունեցող գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում լեզվաբանությունը։ Հայոց լեզվի պատմության և նոր գրական հայերենի սկզբնավորման շրջանի խոր ու հանգամանալից քննությունը, ինչպես նաև այդ կապակցությամբ ընդհանրապես լեզվի էության զարգացման տարբերակումների և լեզվական այլ իրողությունների Ա. Այտընյանի ըմբռնումները վեր են բարձրանում նրա ժամանակից և շատ կողմերով կապվում են այժմեական լեզվաբանական խնդիրների լուծման հետ։

Հեղինակը Ա. Այտընյանի լեզվաբանական հայացքների քննությունը կառուցել է՝ ելնելով նրա «Ընական քերականություն» աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությունից։ Այն դրել է ուսումնասիրության կենտրոնում և լրացրել տարբեր հոդվածներում առաջ քաշված դրույթների ու տեսակետների քննարկումով։

Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանը։

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ—Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839—1860), *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 375 էջ։*

Զմյուռնահայ մամուլի 1839—1860 թթ. պատմությանը նվիրված այս գիրքը 1839—1860 թթ. ժամանակաշրջանն ընդգրկող ուսումնասիրության առաջին մասն է։ Զմյուռնահայ մամուլը հա-

ռուսաց նյութ է տալիս XIX դ. հայ կյանքի մասին։ Գաղթօջախի պարբերական մամուլը իր նպաստն է բերել արևմտահայության գոյատևմանը և համընդհանուր զարթոնքին, իր առաջադիմական-դեմոկրատական օրգաններով ծանրակշիռ բաժին է դրել հայ դեմոկրատական գաղափարախոսության հաստատման ու հաղթանակի գործում։ Գրքի ընդգրկած գրեթե երկու տասնամյակում Զմյուռնիայում հրատարակվել է 7 պարբերական՝ «Արշալույս արարատյան», «Շտեմարան պիտանի գիտելեաց», «Հայրենասեր», «Արփի արարատյան», «Թուխակ Հայկազյան», «Երկասեր» և «Միություն»։ Հեղինակը առանձին-առանձին անդրադարձել է դրանցից յուրաքանչյուրին, գաղթօջախի հասարակական կյանքի ֆոնի վրա վերլուծել դրանց բովանդակությունը, հասարակական-քաղաքական ուղղվածությունը, արժեքավորել յուրաքանչյուրի գործունեությունը, տվել է թերթերի ու հանդեսների պատմությունը, ներկայացրել խմբագիրների գործունեությունը և կյանքը։ Մ. Հակոբյանը ավելի հանգամանորեն է անդրադարձել «Միություն» հանդեսին, մի պարբերական, որ գտնվել է իր ժամանակի հրատապ խնդիրների բարձրության վրա, վարել է որոշակի դեմոկրատական ուղեգիծ, հարուցած արմատական հարցերով նպաստել է հայ դեմոկրատական մամուլի հաստատմանը Զմյուռնիայի հայկական գաղթօջախում։ Պահպանողական «Արշալույս արարատյանի» և գաղթօջախի հետադիմության դեմ մղած համառ պայքարով «Միությունը» նպաստել է հայ առաջադիմական գաղափարախոսության զարգացմանը։

Գրքում զմյուռնահայ մամուլի հարուստ նյութի քննության հետ միասին արծարծվում են հայ հասարակական մտքի մի շարք առանցքային հարցեր։

Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը։

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆՑ—Հայերը Միջին Ասիայում (XIX դ. երկրորդ կես —1917 թ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 158 էջ։

Գրքում առաջին անգամ լուսաբանվում և ընդհանրացվում է հայերի գաղթը Թուրքեստանի երկրամաս, ցույց է տրվում հայ գաղթականների մասնակցությունն ու ավանդը երկրամասի սոցիալ-անտեսական և հասարակական-քաղաքական, ինչպես նաև մշակութային կյանքում՝ XIX դ. երկրորդ կեսից մինչև 1917 թ.։

Հեղինակը լուսաբանում է հայ բնակչության մերձեցումը միջինասիական ժողովուրդների հետ, նրանց համագործակցությունն ու փոխօգնությունը, հարցեր, որոնք դեռևս չեն արտացոլվել պատմական գրականության մեջ։ Ուսումնասիրության հինգ գլուխներում հեղինակը պատասխանում է հետևյալ հարցերին. հայերը որտեղից, երբ և ինչու են գաղթել Միջին Ասիա, ինչպես էր ընթանում հայ բնակչության հաստատման պրոցեսը, ինչպես էին հայերը մասնակցում երկրամասի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին։ Գիրքը գրված է ռուսերեն, պատասխանատու խմբագիրներն են՝ պատմական գիտությունների դոկտոր Վ. Բ. Բարխուդարյանը և պատմական գիտությունների թեկնածու Գ. Ս. Հարությունյանը։